



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20060

Quintonia

Sphaerium zappogni S

Numerus 20060

1876

372

4-21


2010

2002

372
4-21

ԿԱՆՈՆ

ԾԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՅՑԱՑ



Ե ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐՅՈՅ ԿԱԹՈՒԿԵԿԵ ԷՀՄԻԱԾՆԻ.

1876 - ԱՅԻՆ

8477

370

1949-ԱՀ

ԿԱՆՈՆՔ

372

4-21

ԹԻՍՎԱՆ ԴՊՐՈՑԱՑ

1. Ծխական Դպրոցք ազգիս կարգեալ են ի տալ մանկանց քաղաքաց եւ գիւղօրէից զսկզբնական կրթութիւն եւ զուսումն կարեւորագոյն գիտելեաց :

2. Ծխական Դպրոցք բացեալ լինին հրամանաւ Հոգեւոր Խշանութեան Ազգիս :

3. Ծխական Դպրոցք առ հասարակ ունին երկուս դասարանս, եւ ժամանակ ուսման աշակերտաց սահմանի յերկուս երկուս ամս . որով բովանդակ ուսումն ի նոսին աւարտի յամս չորս :

4. Առարկայք ուսման ի Ծխական դպրոցն են
ա. Կրօնագիտութիւն .
բ. Հայոց լեզու .
տ. Ռուսաց լեզու .
դ. Վայելչագրութիւն Հայոց եւ Ռուսաց .
է. Թուաբանութիւն .
շ. Պատմութիւն .
լ. Աշխարհագրութիւն եւ սկզբունք Բնագիտութեան .
ը. Չայնագրեալ երգեցողութիւն .
ը. Գծագրութիւն .

Ծանօթութիւն . — Ընդարձակութիւն կամ չափ ուսման առարկայիցդ այլոցիկ սահմանի յառանձին հրահանգու կամ նախադիմս, որք զնին ի վերջ կանոնացս այսոցիկ (թ. 4. եւ 2) :

5. Զնոյն նախագիծս եւ Հրահանգու պարտին ունել եւ ծխոկան դպրոցք Օրիորդաց, միայն թէ սոքա պարապին եւ ի Զեռագործս :

6. Ծխական Դպրոցք բացեալ լինին եւ պահպանին՝ ըստ կարգադրութեան Հոգեւոր Խշանութեան՝ ա. չափաւոր թոշակօք աշակերտաց,
է. մասամբ եկեղեցական արդեանց, եւ ժ. կամաւոր նուիրանօք բարեպաշտից :

7. Ժողովուրդք թաղին կամ գեղջն ուր բացեալ լինի Դպրոցն Ծխական՝ պարտին գրաւոր խոսոյ մը յապահովի կացուցանել զգումարդքամոցն որ պիտոյ իցէ ի բացումն եւ ի պահպանութիւն Դպրոցին լիրեանց:

8. Հոգեւոր իշխանութիւնն տայ հրաման առնուլ զմամն ինչ յեկեղեցական արդեանց՝ սահմանելով զայն բառ չափու բաղմութեան ժողովրդեանն եւ արդեանց եկեղեցւոյն, եւ ժողովուրդն օրինաւոր խոսամբ եւ գրով յանձն առնու լրացուցանել զգումարն որ պիտոյ իցէ ի պահպանութիւն Դպրոցին :

9. Ի հաւաքել եւ ի մատակարարել զդրամն կարեւորս ընտրին ի ժողովրդենէն հոգաբարձուք երեք, որք եւ հաստատին ի Հոգեւոր իշխանութենէ, եւ տան նմին զտարեկան հաշխոս մոտից եւ ծախուց :

10. Ենուածք կարգեալք ի պէտս երկդասեան Ծխական Դպրոցաց կառուցանին, կամ յարմարին ըստ կարի ձեւոցն եւ գծագրաց հրատարակելոց յարանց հմտից արուեստի մանկավարժութեան :

11. Անմիջական տեսչութիւն միոյ միոյ Ծխական Դպրոցի յանձնեալ լինի ի Թեմական Տեսչէն միում ի վարժապետաց. իսկ Թեմական Տեսուչն պատասխանատու է առաջի Հոգեւոր իշխանութեան վասն կանոնաւոր դասառութեան աշակերտաց, վասն արտաքին բարեկարգութեան նոցին, եւ առհասարակ վասն ճիշտ կատարման ամենայն կարգութութեանց որ լինիցին սակա տեսչութեան Դպրոցացն :

12. Վարժապետին պարտք են յօրինել ա. զցուցակս աշակերտաց ըստ օրինակին եղելոյ ի վերջ տետրակիս ընդ թուահամարաւս 3, եւ է. զօրագրութիւնս ըստ օրինակին ընդ թուահամարաւս 4:

13. Թեմական Տեսուչք պարտին գէթ երկիցս ի տարւոջ յայց ելանել միում միում ի Ծխական Դպրոցաց եւ տեղեկանալ ընթացից նոցին եւ յառաջադիմութեան, եւ ի վերջ տարւոյն տալ զնոցանէ Հոգեւոր իշխանութեան զընդարձակ տեղեկութիւն գրաւոր :

14. Բաց ի Հոգաբարձուաց կարգեալ լինի ի Հոգեւոր իշխանութենէ առաջարկութեամբ Թեմական Տեսչին եւ Աւագ քահանայ ոք կամ գէթ Սարկաւագ ոք ուսումնական, որ ընդ ժամանակս ժամանակս յայց ելանելով Դպրոցին, տեղեկանայ ընթացից աշակերտացն եւ պիտոյից նոցին :

15. Թիւ աշակերտաց միոյ վարժապետի չպարտի երբէք լինել աւելի քան զվաթսուն, եւ եթէ ըստ պիտոյից տեղւոյն հարկիցի յաւելու զթիւս

աշակերտաց, մարթէ է բանալ առ միում միում յերկուց դասարանաց մէն մի զուգահեռական դասարանս հանդերձ առանձինն ուսուցչօք :

16. Յառաջին դասարան Ծխական Դպրոցաց ընկալեալ լինին մանկունք որոց հասակն չիցէ պակաս քան զեօթն ամաց եւ ոչ աւելի քան զերկոտառն: Եթէ գտանիցին մանկունք արդէն պատրաստեալք ի մտանել յերկորդ դասարան, հաստի այնպիսի տղայոց չղարտի լինել աւելի քան զտմն 15, եւ օրիորդացն աւելի քան զ13:

17. Ծխական Դպրոցք տղայոց եւ օրիորդաց պարտին լինել ամենայն ուրեք որիշք ի միմեանց ըստ ամենայն պարագայից, թէպէտեւ երկոքին եւս գտանիցին ի նմին գաւթի եկեղեցւոյ :

18. Զժամանակ ընդունելութեան աշակերտաց ի Ծխական Դպրոցս թէպէտ եւ ոչ է մարթ ճշգիւ սահմանել, բայց առհասարակ պարտէ ծանուցանել ծնողաց նոցին զի ժամանակ ընդունելութեան մանկանց նոցա է երկիցս ի տարւոջ, այս լինքն ի տարեգլխի եւ ի սկզբան տարեկան ուսմանց:

19. Ամենայն ուսուցիչ զօր ամենայն նշանակէ յօրագրութեան (ըստ օրինակին թ. 4) զանուանս բացակայ աշակերտաց եւ զպատճառս բացակայութեան նոցին, եւս եւ զառարկայս զորս ուսեալ իցեն աշակերտք յայնը առուր :

20. Աշակերտք եւ աշակերտուհիք որք ծոյլ իցեն ի բնէ, կամ բոլորովին անընդունակք եւ անուղղայք, յետ կարեւոր խրատուց եւ աղդարարութեանց առ ծնողս, խորհրդով հոգաբարձուաց Դպրոցին ի բաց արձակին:

21. Մանկունք որք աւարտեալ իցեն զառամեայ ընթացս ուսման Ծխական Դպրոցաց ընդունին զվայագիրս յետ տարեկան հարցաքննութեան :

22. Հարցաքննութիւն աշակերտաց որք աւարտեալ իցեն զընթացս ուսման լինի առաջի վարժապետաց եւ հոգաբարձուաց Դպրոցին ըստ օրինակին եղելոյ ի վերջ տետրակիս ընդ թուահամարաւս 5, յորում կազմի ցուցակ աշակերտաց, որք պատրաստին աւարտել զընթացս եւ անկանել ընդ հարցաքննութեամբ :

23. Չափ պահանջանաց ի հարցաքննութեան ըստ իւրաքանչիւր աւարկայից սահմանի նախագծիւք նոցին, եւ նոքա միայն ընդունին վկայութիւնս աւարտման ընթացից՝ որք բոլորովին գիտակ իցեն նշանակերցըն ի նախագիծս յայնոսիկ :

24. Եթէ ոք յաշակերտաց ոչ ըստ բաւականին տուեալ իցէ պատասխանի յառաջնում նուագի հարցաքննութեան, կարող է անկանել ընդերկորդ հարցաքննութեամբ, բայց միայն զինի միոյ տարւոյ, եւ այն՝ մընալով յայնմ ամի եւս ի նմին Դպրոցի:

25. Հարցմունք հարցաքննելի աշակերտաց առաջարկին ըստ ընտրութեան քննչաց նոցա, յորոց իւրաքանչիւրն նշանակէ յիւրումն ցուցակի զշափ հմտութեան աշակերտացն ըստ իւրաքանչիւր առարկայից: Յաւարտ պատասխանեաց հարցաքննեալ աշակերտին ըստ այս ինչ առարկայի, յընդհանուր գումարէ նշանակաց կազմի միջին նշանակ եւ գրի այն յընդհանուր ցուցակին հացաքննութեան:

Ծանօթիւն. — Նշանակըն են սոքա, 5 — Յոյժ գովելի, 4 — Գովելի, 3 — Զափաւոր, 2 — Թերի, եւ 1 — Տկար:

26. Յաւարտ հարցաքննութեան կազմի արձանագրութիւն, յորում ստորագրեն վարժապետք եւ հոգաբարձուք. եւ արձանագրութիւնն այն մատուցանի ի տեսութիւն Թեմական Տեսչին. իսկ նա նշանակէ ի ցուցակի անդ հանդէպ աշակերտաց որք արժանաւորք իցեն վկայագրի՝ այսպէս. «Արժանի է վկայագրոյ», . եւ ապա դարձուցանէ զարձանագրութիւնն զայն ի Դպրոցն ի պահպանութիւն, եւ գլխաւոր վարժապետն պատրաստէ զկայագիրն ըստ ձեւոյն եղելոյ ի վերջ տետրակիս (Թ. 6), եւ ապա անցուցանէ զայն յառանձին մատեան Դպրոցին (ըստ օրինակին որ ընդթուահամարաւո 7). այլ եւ ի վկայագիրսն դնէ զթուահամարա՛ ընդ որովք դրոշմեալ են վկայագիրքն յայնմ մատենի, եւ ապա տայ զվկայագիրն ծնողաց մանկուոյն կամ խնամակալաց նոցա՛ ընդունելով ի նոցանէ սոսրագրութիւն ի մատենին:

27. Եթէ ոմանք յաշակերտաց որք աւարտեալ իցեն զընթացս ուսման ի Ծխական Դպրոցի՝ կամիցին մոտանել ի Հոգեւոր Դպրոց վիճակին, եւ պատրաստիլ ի մտանել ի մին ի դասարանաց նորին, կարեն ըստ խնդրագրոյ ծնողացն մնալ ի դպրոցին այլ եւս տարի մի եւ պատրաստիլ, քաղուածքս առնելով ուսմանցն եւ ընթեռնով զգիրս պիտանիս ըստ իւրաքանչիւր առարկայից՝ ըստ առաջնորդելոյ վարժապետաց:

28. Ի տրւչութեան վկայագրսց աշակերտուհեաց Դպրոցին օրիորդաց՝ պահպանի նոյն կարգ նշանակեալ ի յօդ. 26:

Ծանօթիւն. — Տպագիր վկայագիրք որք տուեալ լինին ըստ կանոնացս այսոցիկ, պատրաստին ըստ կարդաղրութեան Թեմական Տեսչաց:

29. Ուսումն ի Ծխական Դպրոցս տեւել ընդհանրապէս ընդ ամն ողջոյն. միայն ի գէպս եւ ի անգիս յորս անպատճառ հարկաւոր գատիցի տալ աշակերտաց զարձակուրդ (եւ այն ոչ աւելի քան զաւուրս քառասուն) պարտ է նոցա յայնմ միջոցի եւս պարապել քաղթածով ուսմանցն ընդ հսկողութեամբ միոյ կամ երկուց վարժապետաց:

30. Աշակերտք եւ աշակերտուհիք Ծխական Դպրոցաց արձակին յառաջիկայ աւուրս:

ա. Յաւարտ տօնից խաչանիչ դրոշմելոց յիրաշուցի մերում:

բ. ՅԱւարտ շաբաթու (յորում պարտին խոստովանել եւ հազարդիկ Սրբոյ Խորհրդոյն):

տ. Յաւարտ անուանակոչութեան եւ ծննդեան 0գոստավառ Կայսեր, Կայսրուհուոյ ժառանգին եւ ամուսնոյնորա, եւս եւ յաւուրս Դահակալութեան նոցա եւ օծման ի Կայսերութիւն:

31. Կրօնուսոյց վարժապետին պարտք են ի տօնական աւուրս յառաջ քան զպատարագն բացատրել աշակերտաց զիսորհուրդ տօնին, որպէս եւ զիմաստ Աւետարանի այնր աւուրս:

32. Յուսուցութիւն Ծխական Դպրոցաց կարգին առ նուազն երեք դասատուք, այս ինքն դասատու առաջնոյ դասարանին, դասատու երկրորդի դասարանին եւ ուսուցիչն Կրօնագիտութեան յերկոսին դասարանը: Եթէ բացցին ուրեք եւ զուգահեռական բաժինք, կարգին եւ ի նոսա մի մի ուսուցիչք:

33. Ուսուցիչք եւ վարժապետք Ծխական Դպրոցաց առհասարակ ընտարին եւ առաջարկին ի Թեմական Տեսչաց ի հաստատութիւն Առաջնորդի վիճակին:

34. Ոռձիկ ուսուցչաց ի Ծխական դպրոցս եւ չափ նորին սահմանի ըստ հանգամանաց տեղեացն եւ անձանց՝ հայելով ի գրամական կարողութիւն Դպրոցին:

35. Գումարն գրամոց նշանակեալ ի պահպանութիւն դպրոցին ի տեղական աղբերաց՝ պարտի ամառ յառաջ կամ գէթ վեցամսեայ ժամանակաւ յառաջագոյն գտանիլ ի ձեռս Հոգաբարձուաց, եւ եթէ ի վերջ այնր տարւոյ գումարն այն ոչ ծախեսցի յառարկայս սահմանեալս, մնացորդ նորին դարձուցանի ի գրամագլուխ պահեստի եւ գոլով սեպհականութիւն Դպրոցին՝ աւանդի յանքոյթ զրամատուն ուրեք՝ որպէս զի անեսցէ շահաբերութեամբ:

36. Ամենայն Ծխական Դպրոց պարտի ունել զինվիք ըստ ձեւոյն եղեցից ի վերջ տեսրակիս ընդ թուահամարաւ 10:

37. Թեմական Տեսուչք պարտին փոյթ ունել՝ զի ըստ շափու դրամական կարողութեան տեղեաց տեղեաց գտանիցին յամենայն Դպրոցս (յառաջիկայ դպրոցական պիտոյք) ։ Այս ուժի մոտենի այսուհետեւ պատճեն անձնական ա. Գրադարան։

բ. Զանազան ուսումնական եւ դասական պիտոյք՝ յորոց մարթ
իցէ բաշխել ինչ ինչ եւ ձրիաբար աղքատ աշակերտաց՝ որք
ոչ ունիցին կարողութիւն հայթհայթելոյ զայնոսիկ ծախիւ-
խրեանց :

38. Գրեան եւ թուղթ եւ այլ սկիտոյք ուսումնականք աշակերտաց վաճառքին ծնողաց նոցին ի գրասենեկի Գալրոցին:

39. Ե Դպրոցին պարտի գտանիլ ժապաւինեալ մանրամասն ցուցակ ամենայն կահուց եւ կարասեաց Դպրոցին, եւս եւ գրենոյ եւ այլոց ուսումնական պիտոյից, ստորագրութեամբ Հոգաբարձուաց այլ եւ առանձինն տետրակ վասն գրելոյ ի նոսին զգրեան եւ զայլ ուսումնական պիտոյս յառաջամանակեայ կիրառութիւն վարժապետաց առաջարկ

40. Τριαντάφυλλος ή ψωδωπόμαντζε τρέβησε πεποιη-
νακανική μεταμόρφωση σε λίμνη της ορωμάτης Φαραγγίου: Ως
ορέαν ψωδωπότερη οικογένεια αρκετά φύρωσε πεποιη-
νακανική Φαραγγίου, αγγείο της πατέρας της οικογένειας της.

41. Կանոնադրութիւնս այս սահմանի փորձայ ազագաւ վասն չորեց ամաց, եւ յետ այնորիկ հաստատեսցի կամ փախեսցի.

զար եղի դաշնակ թմբու ու գլուխման մեջապար մասնակից մաս պահ-
ու առաջանակ սիօսու ու անդեպ արտ զի՞ն միջիկից մայ սահի ու պահանա

ԳԵՎԱԽՈՍՈՒԹԵԱՆ ԿՔՕՆԱԴԻՑԱԽՈՍՈՒԹԵԱՆ

Ի ԾԽԸԿԱՆ ԴՊՐՈՑՍ

Առաջին՝ բնական եւ միանգամայն ազդու հնարք կրթելոյ զմանկունական բարեկաշտութեան է աղօնուն : Բայց որպէս զի աղօթակացութիւնն եղիցի արդարեւ բարեկաշտական եւ բարոյական դաստիարակութիւնն, պարտի տպաւորիլ ի սրտի մանկան այնպէս՝ զի նա յաջօթել իւրում ոչ միայն կրկնեսցէ զբառս սերտ ի բերան ուսեալս, այլ եւ բոլորով սրտիւ ամբարձուցէ զմիտս խըր առ այն՝ որում աղօթէ : Վասն որոյ հարկ է զի մանուկն բացայայտ եղանակաւ իմասցի գաղօթան . այլ եւ պարտ է աղօթիցն այն պիտի լինել որք յարմար իցեն հասակի եւ իմացողութեան մանկանց :

Յառաջ քան զամենայն ինչ պարտ է տալ մանկանց իմանալ՝ թէ զի՞ն
է Աստուած աղարիչն եւ նախախնամող՝ իբրեւ Հոգի ամենուրեք եւ ամե-
նատես, Հայր գթած եւ մարդասէր, եւ թէ որպէս ազօթք մեր պարտի
իինել առ նա սրտառուչք եւ եռանդունք :

Յորժամ՝ նոր ինչ ազօթս առաջի կայցէ ուսուցանել մանկանց, պարսէ նախ բացատրել նոյն դիմաստս նորին, եւ այն յաշխարհիկ լեզու, եւ պատճառը կամ առաջարարականի՝ լսելով ի բերանոյ կրօնուսոյց վարժապետին :

Առաջին ազօթք մանկանց պարտին լինել տո Աստուած՝ մի եւ երեք
անձնեայ, բացատրելով մանկանց՝ թէ խորհուրդն ամենասուրբ Երրոր
դութեան վարդապետութիւն է Նկեղեցւոյ, յոր պարտին հաւատալ՝ ա
ռանց ջանահնար լինելոյ բացայայտ եղանակաւ հասու լինել այնմ:

Նախ քան զամենայն պարտին մանկունք ուսանել դժոյը ՁԵ՞՞՝ զոր
ուսոյց մեղ ինքն իսկ Փրկիչն մեր. ապա զգլիսաւոր աղօթս առաւօտու եւ
երեկոյի, որք գտանին ի ժամագիրս մերց որպիսի են Տէր ԵՌԵ զայնունն է.
Լաւ+ առաւ-օդաւ. Օաւ-աւ-օդաւ զայօնն եւլն՝ յառաւօտու. եւ Փաւ+ +ԵԿ
Տէր Ա.աւ-աւծն, Մականիմն եւ Ինկալ Տէրն յերեկոյին. Բայց յայնմանէ կը-
րօնուսուցին պարտք են բացայայտել մանկանց զխորհուրդ մասանց շէ-
նուածոյ եկեղեցւոյ եւ զգլիսաւոր քարոզս եւ աղօթս պատարագին :

Յետ պատմելոյ մանկանց (ի պատմութենէ Սուրբ Գրոց) զստեղծումն աշխարհի, զպատուիրանազանցութիւննախահարց եւ զխոստումն գալստեան Փրկչին, անցանէ Կրօնուսոյցն. ի պատմութիւն Ծննդեան Փրկչին խոստացելոյ՝ ի սրբոյ կուսէն Մարիամայ : — Ի պատմութենէ Նոր Կտակարանին պարտ է պատմել մանկանց միայն զայնոսիկ պատմութիւնն որք ըացայայտեն զլսորհու բգս գլխաւոր տօնից Եկեղեցւոյ եւ զկարեւոր մասունս վարդապետութեանց Քրիստոսի :

Միանգամայն ուսուցանի մասն մասն բաժանմակը Հանգանակն հաւատոյ, պարզելով մանկանց ըստ չափու հասկացողութեան նոցազիմաստսնորին:

Ապա ուստանին մանկունք համառօտիւ զպատմութիւն Հին Կտակարանի, եւ ընթեռնուն յԱւետարանէ զգլուխս բանիցն՝ զորս արդէն ուսեալ իցին :

Բ. ԴԱՍՏԱՐԱԿ. մշակմանը մաս զարգաց

Մանրամասն պատմութիւն նոր կտակարանի հանդերձ վերծանութեամբ սրբոյ Աւետարանին :

Ընթերցումն գլխող ինչ բանից է Գործոց Առաքելոց :

Ըստ այս պահանջման կազմութեան գլխավոր քառակի պահանջման մեջ Առաքելական թղթոց եւ քանի մի Սաղմոսաց :

Ուսանել ի բերան զգլիսաւոր մասունս հաւատոյ եւ զխորհուրդս պատարագի եւ այլոց կարգաց աստուածաշպաշտութեան :

Քրիստոնէական վարդապետութիւն :

(P. 2.)

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԴԱՍՏԱՐԱԿԵՐՊԵՐՆ ՈՒՍՏԱՅ

Բ ՇԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՄ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Յառաջ քան զամենայն պարտ է միտ դնել՝ զի ուսցին աշակերտք ընթեռնուլ հայերէն կանոնաւոր անսայթաք եւ մտառու եղանակաւ, եւ ուղղութեամբ բացատրել գրով զմիտս իւրեանց :

— Առանուածոց կոչի ընթերցումն յորժամ մանուկն ընթեռնուցու ըստ կանոնաց ուղիղ առողանութեան՝ միտ գնելով կետադրութեանց : — Վա-սայնուած լինի ընթերցումն յորժամ մանուկն քաջ միտ գնելով իմաստից բանիցն՝ առանց կակապելոյ եւ կրկնելոյ ընթեռնուցու : — Իսկ ճգառու-նէածէ լինի ընթերցումն՝ յորժամ մանուկն ի միտ առնուցու կամ իմա-նալոց դրնթերցեախ :

Ա. ԳԱՎԱՐԱՆ

Յառաջնում դասարանի սկսանին մանկունքը ընթեռնուլ „զնախակրթանս հայերէն լեզուի”, ըստ կանոնաց եղելոց իսկզբան գրոցն. որով ուսանին միանգամայն զգբավարժութիւն, զուղիղ առողջանութիւն, զուղղագրութիւն եւ զտարես գրոց լեզուի՝ հանգերձ թարգմանութեամբ բառից եւ համառօտ ասացուածոց :

Ուսուցիչն Հայերէն լեզուի ի նոյն գրոց եւ ի նոյն դասուց յօրինէ նորանոր հարցմունս դիւրահասս մանկանց, եւ պահանջէ ի նոցանէ զպատասխանիս նախ բանիւ եւ ապա գրով։

Ի տալ մանկանց կրթութիւնս գրաւորս՝ պարտ է փոխանակ տալոյնոցա արտագրել ի գրոց՝ թելադրել նոցա զգրելիսն. եւ առ այս նախ ընթեռնու ուսուցիչն զհատուածն գրելի, բացատրէ մանկանց զվրիպակազորս կարող են առնել ի գրելն, եւ ապա ոկսանի թելադրել. Յաւարտ գըրութեանն եւ ուղղելոյ ուսուցչին զվրիպական բանիւ բերանոյ, օգտակար

Է տալ մանկանց ընթեռնուլ զնոյն բան ի դասագրին, որպէս զի ինքեանք իսկ տեսցեն զվրիպակմն զորս արարեալ իցեն :

Յառաջնում դասարանի բաւական է ուսանել մանկանց ըստ կանոնաց այսոցիկ զառաջին եւ զերկրորդ մասունս Նախակրթանաց Հայերէն լեզուի :

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Աշակերտք երկրորդի դասարանին առնեն զնոյն կրթութիւնս ի վերայ երրորդ եւ չուրորդ մասանց նոյն գրոց Նախակրթանաց, յորս գտանին եւ սկզբունք Քերականութեան, հանդերձ վերլուծութեամբ եւ կրթութեամբ շարգմանութեան, որով յընթացս չորից ամաց ուսանին մանկունք Ծխական Դպրոցաց՝ եթէ ոչ զանսխալ շարադրութիւն ի գրոց բարբառ, գէթ իմանալ զայն անթերի, եւ յաշխարհիկն շարագրել բանս՝ ըստ կանոնաց ուղղագրութեան :

ԹՈՒՍԵՑ ԼԵԶՈՒ

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Ուսուցիչն ինքուին Ռուսաց՝ պարտի խօսել ընդ աշակերտուն ի լեզու Ռուսաց. եւ եթէ գիտակ իցէ Հայերէնին, պարտի միայն զնշանակութիւնըս բառիցն բացատրել Հայերէն : Յառաջնումն դասարանի պարտ է աշակերտաց ուսանել զանսայթաք ընթերցումն Ռուսերէնին՝ հանդերձ ուղիղ առողանութեամբ միոյ միոյ ի տառիցն, եւ ուսանելով բառս եւ ոճս բանից ի վերայ առաջնոյ մասին Ռուսո Շլուշնոքեայ :

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Աշակերտք վարժեալք. յառաջնումն դասարանի յանսայթաք վերծանութիւն եւ ի բերանացի եւ գրաւոր պատասխանատուութիւն որիշ որիշ Հարցմանց ուսուցչին՝ եւս եւ յընդօրինակելի գրոց Հատուածս բանից անսխալ ուղղագրութեամբ, յերկրորդումն դասարանի սկսանին ուսանել զառաջին մասն Քերականութեան ինքուին Ռուսաց, եւ ի չորրորդում ամին նաեւ զերկրորդ մասն հանդերձ կանոնօք ուղղագրութեան, շարագրութեամբ համառօտ յօդուածոց եւ սերտողութեամբ արձակ եւ ոտանաւոր բանից :

ԹՈՒՍԵՑՆՈՒԹԻՒՆ

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Յառաջնում դասարանին պարտին ուսանել աշակերտքն ի Հայ լեզու զշորեսին գլխաւոր գործողութիւնս Թուաբանութեան այս ինքն ըդգումար, զհանումն, զբազմապատկութիւն եւ զբաժանումն՝ հանդերձ փորձիւք, եւ միանդամայն մտաւոր համարողութեամբ, եւ այն ըստ կարի բազմաթիւ օրինակօք՝ զորս պարտի ուսուցիչն առաջարկել նոցա ի լուծումն՝ մտաւոր հաշուարարութեամբ եւ գրաւոր առաջարկութեամբք. Միանդամայն պարտին աշակերտքն յերկրորդում ամի առաջնոյ դասարանին տեղեկանալ մասանց գրամոց, ժամանակի, կշռոց, ժափուց եւն:

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Երկոսին ամս երկրորդի դասարանին ուսանին աշակերտք գիրառութիւն համարչի, որ է «Ճ՛», եւ ապա զպարզ կոտորակս եւ զլուծումն առաջարկութեանց ըստ կանոնաց երրեակ թուոց, խառնուրդից, ընկերութեան եւ շահուց կամ տոկոսեաց՝ առանց թուաբանական համեմատութեանց :

Ընդ նմին ուսանին մանկունք զհիմնական կանոնս մակարդակաշափութեան եւ գծագրութեան :

ԱՃԽՍՔԾԳՐՈՒԹԻՒՆ

Ուսուցիչն աշխարհագրութեան պարտի այնպիսի ոճով ուսուցանել Հայերէն զայս կարեւոր գիտութիւն, զի աշակերտք երկոցուն դասարանց Ծխական Դպրոցին նախ քաջ տեղեկասցին ի վերայ երկրագնուի կամ համատարած աշխարհացուցի թէ որ է ցամաքն եւ զանազան մասունքն որին եւ որ ջուրն հանդերձ իւրովք մասամբքն : Ապապարտին մանկունքըն ուսանել թէ ի քանի մասունս բաժանի աշխարհ, եւ որք են յատկութիւնք միոյ միոյ ի մասանց անտի: Յետ այնորիկ պարտին ուսանել զաշխարհագրութիւն Ռուսիոյ, այս ինքն զընդհանուր գիրս եւ զբաժանումն Ռուսաստանի յնւրոպական եւ յնսիական մասունս, եւս եւ ի կուսակալութիւնս եւ ի գաւառս (առանց ուսանելոյ հարկաւ զանուանս միոյ միոյ ի նոցանէ): Պարտին ուսանել եւ զմայրաքաղաքս, եւ զգլխաւոր քաղաքս Ռուսիոյ եւ զթիւ բնակչաց աշխարհին, եւ զանուանս գլխաւոր

ազգաց եւ ժողովրդոց որ ի նմա. ընդ որս եւ առանձինն հմտանալ ըդ-
Հայաստանէ եւ զգլխաւոր լերանց, գետոց, եւ նշանաւոր հնութեանց
նորին:

Յետ այնորիկ պարտին ուսանել զանուանս եւ զտեղիս գլխաւորս
հնդեցուն մասանց աշխարհի, սկսանելով յԵւրոպայէ, այլ եւ զմայրաքա-
ղաքս ամենայն տէրութեանց հանդերձ թուով բնակչացն եւ պէսպէս
յատիութեանց նոցին, զորս պարտի ուսուցիչն բերանացի պատմելով շար-
ժել զհետաքննութիւն աշակերտաց ի տեղեկանալ այնմ ամենայնի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Աշակերտք ծխական գլրոցաց պարտին ուսանել հայերէն զսկզբունս
ընդհանուր պատմութեան հին եւ նոր ազգաց, եւ փոքր մի ընդարձակա-
գոյն զպատմութիւն Հայոց, եւ զպատմութիւն Ռուսաստանի իսկզբանէ
մինչեւ ցմեր աւուրս:

Առ այս պարտի ուսուցիչն պատմութեան ի դաստիօսել իւրում
պատմել զսահմանեալ ինչ անցս կամ զդէպս ամբողջութեամբ, եւ ապա
հարցանել աշակերտաց զնոյն ի բազմաթիւ հարցմունս եւ ի պատասխա-
նիս բաժանելով զդասն. ապա եւ ոմանց յաշակերտացն տալ պատմել
զնոյն գաս ամբողջապէս, որպէս զի ոչ միայն գիտասցեն զդէպն հան-
դերձ անուամբք անձանց եւ տեղեաց եւ ժամանակին կամ թուականի,
այլ եւ վարժեսցին ի կարգաբանութիւն եւ ի յստակ բացատրութիւն
ուսելոցն: Առ այս մեծապէս օգտակար է տալ մանկանց առնել զշա-
րագրութիւնս իւրեանց զպէսպէս մասանց պատմութեան, կամ զնոյն
գասս ի գրի հարկանելով:

ՍԿԶԲՈՒՆՔ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ.

Յերկուս ամս առաջնոյ գասարանին պարտին աշակերտք ուսանել յըն-
թերցարանս իւրեանց ի հայ լեզու զգլխաւոր եւ զգուարձալի մասունս բնա-
կան պատմութեան կենդանեաց եւ բուսոց եւ հանդաց, առանց միսելոյ
յուսումնական դասաւորութիւնս եւ ի յատկութիւնս նոցին: Խոկ յերկ-
րորդում դասարանին պարտին ուսանել նոյնպիսի գիւրընտել եւ պարզ
ոճով զսկզբունս այլոց բնական գիտութեանց, մանաւանդ բնագիտու-
թեան եւ բնալուծութեան՝ առ որ մեծապէս օգտակար լիցի ունել ի
ծխական Դպրոցի եւ զգլխաւորագոյն մեքենայս կամ զգործիս բնագի-
տութեան:

ԾԱԲԱԹԱԿԱՆ ԹԻՒ ԴԱՍՈՒՑ

Ի ՃԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՍ

Ա. ԴԱՍԱՐԱՆ.	Բ. ԴԱՍԱՐԱՆ		
Ա. ՏԱՐԻ Բ. ՏԱՐԻ	Գ. ՏԱՐԻ Դ. ՏԱՐԻ		
Կրօնագիտութիւն	6.	6.	6.
Հայոց լեզու	6.	6.	6.
Ռուսաց լեզու	6.	6.	6.
Թուաբանութիւն	5.	5.	6.
Պատմութիւն	—	—	3.
Աշխարհագրութիւն եւ Բնագիտութիւն	—	—	3.
Վայելչագրութիւն եւ Գր- ծագրութիւն	2.	2.	4.
	25.	25.	34.
			34.

Եանօրութիւն Ա.—Ժամանակ սկսանելոյ եւ աւարտելոյ դասուց նշանակի ի թէմական Տես-
չին հայելով ի հանդամանս տեղւոյ Գպրոցին:

Եանօրութիւն Բ.—Զօր ամենայն յետ աւարտման դասուց պարապին աշակերտք (ըստ կարի
ամեներեան) յարուեստ ծայնագրութեան եւ ի ծայնագրեալ երգեցողութիւն կէս ժամ. որով եւ
առաջնորդութեամբ ուսուցչին ծայնագրութեան երգեն յեկեղեցւոց ի կիւրակէս եւ ի տօնական
աւուրս:



ՎԿԱՅԱԳԻՐ

Աշակերտ (կամ Աշակերտուհի) Ծխական Դպրոցի (այս անունը) քաղաքի (կամ գեղջ) (առաջ նշանակելիք էն անուն, հայրանուն և մա-
կանուն, վիճակ կամ կոլուն, աւելի ծննդեանն, առաջը, ամբ և օք ձեւն-
դեանն) յաջողութեամբ աւարտեաց ի սմին զընթացս ուսման.
որոյ վասն եւ տուաւ նմա վկայագիրս այս կնքով Դպրոցիս
յամի 18 յամսեան /

Ստորագրութիւնք Տեսչի եւ այլաց ուսուցչաղ Դարսողին:

(ՕՐԻՆԱԿ թ. 5.)

ՑՈՒՑԱԿ

Աշակերտաց Ծիսական Դպրոցի քաղաքին (կամ գեղջն այս անուն) յամի 1875—76.

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

(Ասորագրութիւն Տեսչի Կպրոցին .)

(ՕՐԻՆԱԿ. Թ. 5.)

ՑՈՒՑԱԿ

Վշակերտաց Ռախական Դպրոցին (այս անուն) քաղաքի (կամ գեղջ),
որը հարցաքննեցան յաւարտ ընթացից ուսման յամսեանն

18 ամի:

Տուրաժամանքը Ըստ լրացրեցին	Մականուն, անուն եւ նայրանուն աշակերտի.	Վիճակ համար կամ իրավունքի թիվը կամ համարականը	Տարբերակ եւ օր ծննդեամբ	Նշանակք աստիճանի պատասխանուց աշակերտին ի հարցաքննութեան.			Արժանի իցէ վկայա- գործ.
				Արժանի իցէ վկայա- գործ.	Վիճակ համար կամ իրավունքի թիվը.	Բուռարտութիւն.	
				Աշակերտին ի հարցաքննութեան մասին աշխատանքը կամ գիւղականի, յորմէ քաղաքէ կամ յորմէ գեղջէ,	Աշխատանքը կամ գիւղականի, յորմէ քաղաքէ կամ յորմէ գեղջէ,	Աշխատանքը կամ գիւղականի, յորմէ քաղաքէ կամ յորմէ գեղջէ,	

Ստորագրութիւնք Տեսչի Դպրոցին եւ այլոց հարցաքննողաց:

Ստորագրութիւն Թեմական
Տեսչի.

(*) Պարտ է նշանակել թէ որդի վաճառականի իցէ թէ ճասարակ քաղաքացոյ կամ գիւղականի, յորմէ քաղաքէ կամ յորմէ գեղջէ, եւ իցէ ծնեալ:

(ՕՐԻՆԱԿ. Թ. 7.)

ՏՈՄԱՐ

Յորում գրին վկայագիրք տուեալք աշակերտաց Ռախական Դպրոցին (այս անուն) քաղաքի կամ գեղջ, յաղագս յաջողութեամբ աւարտելոյ նոցա զբնթացս ուսման յայսմ դպրոցի:

Թէ ում տուաւ վկայագիրն, հանդերձ տեղեկութեամբ զնմննէ որք նշանակեցան ի վկայագիրն:	Տարի, ամիս եւ օր տըւ- չութեան վկայագիրն:	Ստորագրութիւն ընդու- նողին զվկայագիրն:
		

(ՕՐԻՆԱԿ թ. 8.)

(օՐԻՆԱԿԻ Թ. 9.)

801854

Աշակերտութեաց Շխական Դպրոցին օրիորդաց (այս անուն) քաղաքի (կամ գեղջ), որը հարցաբննեցան յաւարտ ընթացից ուսման յամսեանն յամին 18 :

Համին 18

Ստորագրութիւնք Տեսչի Գլուխին և այլոց Հարցաքննողաց





20060

2013



